Հայտարարություն

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ «ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Երվանդաշատ բնակավայրի «Երվանդաշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ՝ մեթոդիստի՝ 0,25 դրույքով(1դրույքը 170000 դրամ) , դաստիարակի 1դրույք(1դրույքը 170000 դրամ) և դաստիարակ 0,5 դրույքով (0,5դրույքը 85000դրամ) թափուր պաշտոնների համար։Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին Կրթության և գիտության նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված տարիֆառակավորման պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթն անց է կացվելու 2026 թվականի սեպտեմբերի 15-ին ժամը՝ 14:00-ին, Երվանդաշատ գյուղի Սահմանապահների փողոց 19/1 հասցեում:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են սկսած օգոստոսի 17-ից՝ամեն օր ժամը 8.30-ից մինչև 17:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է 2026թ սեպտեմբերի 11-ը ներառյալ, ժամը 17: 30-ը:

Մրցույթն անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝
https://escs.am/am/news/11978

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093184205 հեռախոսահամարին կամ այցելել << Երվանդաշատի մանկապարտեզ>> ՀՈԱԿ:

Հասցե՝ գ.Երվանդաշատ, Սահմանապահների 19/1:

Էլ. փոստ՝ ervandashat. mankapartez@mail.ru:

<<Երվանդաշատի մանկապարտեզ >> ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Թ. Մնացյան: